22. ԴԱՐՎԻՇԸ

Ինում ա, չինում մին առըտուրական ա ինում։ Ըտրան ընում ա իրեք ախճիգյ։ Հաՙրը ամման դոնըմ ասըմ ա. — Ցրես իմ ըխճըկերքս ինգի մարթի ռեդի տամ, վեր իմ տոՙնըս օղտերը պըեռնած վրեսկե պերի։

Մին դաՙրվիշ էնՙ ընում մին հրեռու տրեղ ապրըմ։ Էս վեր լըսում ա, վեր էս հինչ առուտուրականը ըստի խոսկ ա ասալ, օղտերը վրեսկավ պրեռնըմ ա, հրդե ինըմ, քյընում։

Քյընում ա, քյընում, վերչը հասնըմ ա էտ առուտուրականին տոնը։ Ըտեղ դաՙրվիշը ուրՙան նըպատակը ասըմ ա, առուտուրականն էլ ռաղի յա կրենում։

Հըրսընքին թադարեքյը քաշըմ ըն։ Օխտը օր, օխտը քըշեր հրրսանիք ըն անըմ։ Հըրսընքանը ետը դաՙրվիշը հրդրրվըմ ա, ախճիգյը յոր օնըմ, հրդե ընդնում։

Շատ ըն քյընում, խրեդյ ըն քյընում, էս ախճիգյը տրեսնըմ ա վեր, ախեր, էս ճընապարին վերչ չիկա։ Ասըմ ա. — Էսքան էրգյան ճընապարը մրեղ ըշտրեղ աՙ տանըմ։

Դաՙրվիշը խեթ-խեթ ընդրան եշըմ ա, ասըմ. — Ցրենտ կըտրի, թա։ ըշտրեղ ընք քյընում, էտ քու կործրտ չի՞։

Վեր իտի յա ասըմ, ախճիգյը մընում ա մաթ մընացած, շանը տոՙղ ա ընգնըմ, մընում ա սուս ըրած։

Շատ ըն քյընում, խրրեդյ ըն քյընում, էտ դաՙրվիշըն ա գյուղում, վերչը հրսնըմ ըն մին ամարաթի։ Մին մրեծ ըրկաթի դրրբըղավ նի

յըն մընում էտ ամարաթը։ Էրկունջի օրը էտ դարվիշը էտ ըխճրկանը մին հում ջիգյար ա նշանց տամ, ասըմ. — Յրես օխտը օրավ քյընըմ ըմ վրերսի, քյըրեզ էլ օխտը օր ժամանակ ըմ տամ, վեր օխտը օրանը ետը կյամ, տրեսնամ էս ըխճրկա ջիգյարը կերած, տու իմ կընեգյըս ըս, հավիդյան ինձ նհետ կապրիս, յրես էլ քյրեզ հունցու հավադարիմ կընեգյ, իմ լոխ թաքուն պրեներս կասիմ, իմ օխտը օթախներիս պընալիքյը քյրեզ կտամ, թա կերիր վրեչ, գյիդա վեր, քու ջիգյարրտ էլ ըմ ընդրղան կախ տալու։

Ըտրանա ետը ծին նրստըմ ա, քյընըմ վրերսի։ Ախճիգյը հի՞նչ անի, շատ մրտածելանը ետը, յոր ա օնըմ վեցինջի օրը էտ ջիգյարը թաղըմ վրեղին մեչին, ինքըն ուրան ասըմ.— Դե, կրկյա, կասիմ կրերալ ըմ, հի՞նչ ա գյիդալու։

Իտի ինքը ուրան սրերտ տինելավ ըսպասըմ ա դարվիշին։ Օխտինջի օրը դարվիշը ջանավարի նման մրռընչալավ կյամ ա։ Դարրազավը նի մընըմ, կանչըմ էտ ըխճրկանը, հրրցընում. — Ջիգյարը կերալ ը՞ս, թա չէ։

Ախճիկն ասըմ ա. — Հա, կրերալ ըմ։

— Դուզն ասի...

— Դուզն ըմ ասըմ, կրերալ ըմ։

Վեր շատ ըստրբում ա, ախճիգյն էլհա ասըմ ա կրերալ ըմ, դարվիշը կրգնված կանչըմ ա. — Ջիգյար, ջիգյար, ըշտե՞ղ ըս, սաս չի լրսվըմ։

Էրկունջի դոնըմըն էլ ա հրրցընըմ, էլհա ծրեն չի լրսվըմ։

Իրեքինջի գոնըմը վեր պրեցուր, կյրակյոռալավ ասըմ ա. — Ջիգյա՛ր, ջիգյա՛ր, ըշտեղ ը՞ս, ջիգյարն ասըմ ա. «Էն ըմ վրեղեն տակինն»։ Համ ասըմ ա, համ էլ վրղրթաթախ տուս կյամ։

Դարվիշը էնքան աջրղվըմ ա, վրեր էտ ըխճրկանը կրտոր-կրտոր ա անըմ, մինակ ջիգյարն ա թողըմ, էն էլ տանըմ ա բրլկոնան կախ անըմ։

Իրեքինջի օրը դարվիշը ծին նրստըմ ա, քյընամ, համին էն առուտուրականին կոշտը։

Տրեղ հրսնելանը յետը ասըմ ա. — Ծրեր ախճիգյը շատ ա տուխուր, սաղ օրը լաց ա ընում, ինձ ղարկալ ա, վրեր միշնակ քյուրը տանիմ, մին քանի շրեբեթ քրշտին կրենա։

Առուտուրականը ռազի յա կրենում։ Միշնակ ախճիգյը դարվիշին նրհետ ճրնապար ա տինըմ։

Էրգյան ճրնապար քյընալանը ետը, էտ ախճիգյն ասըմ ա. — Բա էսքան քյընըմ ընք, հի՞ր պիտի տրեղ հրսնինք։

— Ծրենրտ կրտրի, էտ քու կործրտ չի։

Քյընըմ ըն, քրյնըմ, վերչը տրեղ ըն հրանըմ։

Ախ։Հիդյն ասըմ ա. — Բա հոր ա՞ քյուրրս։

Դարվիշը նշանց ա տամ բրլկոնին պատան կախ տրված չիգյարը, ասըմ.—էս քու քրվոր չիգյարն ա։ Յրես քյրեզ օխտը օր ժամանակ ըմ տրնում։ էտ օխտը օրրմը, թա էս չիգյարը կրերիր, կրերիր, էն վախտը տու իմ հավագարիմ կընեգյրս կինիս, իմ լոխ սեկրետնիս քյրեզ կասիմ, օխտը օթախնիս պրլանիքյը քյրեզ կրտամ, թա վեր կրերիր վեչ, քու քրվոր մընան քյրեզ ըսպրնելու յրմ, չիգյարրտ էս պատան կախ տամ։

Ասըմ ա պրրծրնրմ, ծի նրստրմ, քյընում։

Ախճիգյը մընրմ ա, հունց վեր ասըմ ըն, էտ կոտրած տաշտակին առաչին կոչ եկած։ Հի՞նչ անի, հո՞ւնց անի, ինքն էլ չի գյուղում։ Օրերրն էլ անց ըն կրենում, դարվիշին կյալի օրը մուտանրմ ա։ Ծարը կրտրած էտ ախճիգյը էտ չիգյարը տանրմ ա, զախոտը քրցրմ։

Օխտինչի օրը դարվիշը կյամ ա հրրցրնում. — Չիգյարը կրերալ ըս։

Ախճիզյն ասըմ ա.— Հա՛, կրերալ ըմ։ Երկու դոնրմ էտ ըխճրկանան հրրցրնրմ ա։ Ախճիգյը էլհա ասըմ ա. — Հա, կերալ ըմ։

Իրեքինչի դոնրմը կյոռալավ ասըմ ա. — Չիգյա՛ր, չիգյա՛ր, ըշտրեղ ըս, տուս եք, տրեսնամ։

Չիգյարը զախոտան տուս ա կյամ, թավիլ-թավիլ ընելավ ընգնրմ դարվիշին առաչը։

Դարվիշը վեր տրեսնրմ ա իտի յա, կրտաղրմ ա։ էտ ըխճրկանը կրլնիր կրտրրրմ ա, չիգյարը հանրմ, համին էն պատան կախ տամ։

էն մին օրը ծի յա նրստրմ, ճրնապարվրմ, վեր քյընի մրհեկ էլ էն պուճուր քուրը պրերի։

Քյընրմ ա, քյընրմ, վերչը հրսնրմ ա հանորը տոնը, ասըմ. — Միշնակ ըխճրկանրտ մին լավ, դաշանգյ տրղա օգրմ ա, նրշրնարեքյ ա, քուվերքը օգրմ ըն, վեր ուրանց պուճուր քուրն էլ կյա։

էտ հաները էնքան միամիտ ա ինրմ, վեր հրվատրմ ա, եր ա կրենում էս պուճուր ըխճրկանն էլ ղարկրմ։ էս պուճուր ըխճրկանը մին շատ սուրուն կատու յա ինրմ։ էտ կատուն թաքուն յոր ա օնրմ, տինրմ կրռնրտակին, ծի նրստում, ճրնապարվրմ ըն։ Շատ քյընալանը ետը, տրեղ ըն հրսնում։

Ախճիգյը հրրցրնում ա, թա. — Բա ըշտրե՞ղ ըն իմ մրեծ նան միշնակ քրվերքս։

Դարվիշը ասըմ ա.— Ծրենրտ կրտրի, հինչ քուր, հինչ պրեն,

հենե քուրբտ էն բըլկոնին պատան տըված ջիգյարըն ա։ Տըեսըմ ը՞ս, էտ ջիգյարը էտ քու քըվոր ջիգյարըն ա, օխտը օր քյըեզ վախտ ըմ տինըմ, յըես վըերսի քյընըմ, վեր եկի տըեսի էտ ջիգյարը կըերած, գյիդա՞ վեր տու իմ հավադարիմ կընեգյըս ըս, հինչու օնիմ քյընզ ըմ տալու, հինչ թաքուն պըեներ օնիմ, քյըեզ ասելու յըմ, թա վեր եկի, տըեսի ջիգյարը կըերած վըե՞չ, քյըեզ ըսպանելու յըմ, ջիգյարբտ հանիմ, հա՞մա՞ն տըեղան կախ տամ։

Ասըմ ա, պըրծընում, ծին նըստըմ, քյինըմ։

Էս ախճիգյը տըես ա մըտածըմ, տըեն ա մըտածըմ, մին հընար չի քթնըմ։ Բըրգան մըեսն ա քըցըմ ուրա՞ն կատվին։ Էտ ջիգյարը խրեգյ-խրեգյ կըտորում ա, ամեն օր տամ էտ կատվին։

Օխտինջի օրը ջիգյարը պըրծընըում ա։

Մըռընչալավ, փուհ-փուհ ընելավ դա՞րվիշը կյամ ա, հըրցընըմ.

— Ջիգյարը կըերալ ը՞ս։

— Հա՛, կըերալ ըմ։

— Դուղրն ասի, կըերալ ը՞ս, թա՞ չէ...

— Դե, կըերալ ըմ, իլի՞։

Դա՞րվիշը կյոռըմ ա։ — Ջիգյա՞ր, ջիգյա՞ր ըշտրե՛ղ ըս։

— Էս ըմ սըրտին տակին։

Դա՞րվիշը իրեքինջի դոնըմըն էլ ա հըրցընում, էլհա ջիգյարըն ասըմ ա. — Էս ըմ սրտին տակին։

Դա՞րվիշը շատ ա ուրխանըմ, ասըմ ա. — Տըեսնըմ ըմ, վեր տու կինիս իմ հավագարիմ կընեգյըս, իմ տանըս, իլա՞ծ-չիլա՞ծիս տարը։ Քյըեզ կըտամ իմ օխտը օթախներիս պլանեքը, քյըեզ կասիմ իմ լոխ թաքուն պըեներըս։

Իտի էլ անըմ ա։ Պըլանիքը տամ ա էտ ըխճըկանը, ասըմ.— Օտնլի հետի տու վեշ մին պըեն չի իփիս։ Տըեսնըմ ը՞ս էս պատին մեչին կընոպկան, վեր մին հետ հոփ տաս, մին ստոլ ա տուս կյալու աշխարքիս օտելի լա՞վ-լա՞վ պըեները էն ա ինելու յըրան։ Կոտիս, կը խըմիս, մին էլ հոփ կը տաս, էտ ըստոլը ինքն ուրա՞ն քաշվելու յա։ Ըտրանա կըման էտ օխտը օթախնըերին տըռնելը իրավունք օնիս պըենաս, վըերչի օթախան կըման։

Դե թա հի՞նչ կա էտ վերչի օթախըմը, վեր դա՞րվիշը թողըմ չի պեց անի, գյուդում չի՞։ Էտ լոխ ըսելանը ետը դա՞րվիշը ծի՛ յա նըստըմ քյինա՞մ վըերսի։

Էտ ախճիգյը էտ օխտինջի օթախան կըման, մընացած օթախնին պեց ա անըմ, տըեսնըմ, վըեսկավ, արծաթավ լիգյը, անկին քարերավ, լա՞վ-լա՞վ շորերավ, լա՞վ պըեներավ լիգյը օթախնի...

Վերչը մին օր էլ, շատ ա օղըմ տրեսնա, թա էտ օխտինջի օթախըմը հի՞նչ կա, օղըմ ա հինչ էլ ինի՞, պրեց անի։

Վեր էտ օթախին տոռնը պրեց ա անըմ, բիրդան ասիս լհա մին թոփ ա տրրաքըմ, ըտրղան տուա ըն տրեռնում մին խիլլա մարթ, լոխ սոված-ծարավ, մաշված, տեղին, հունցու մրեռալ։

Էտ մարթիքյը օղըմ ըն գյիդան, թա ուրանց հու վա ազադալ դարվիշին ծրեռքան, օղըմ ըն մին լավոթուն էլ ուրանք անին, ամմա հի՞նչ օնին, վեր հինչ լրվոթուն անին։

Էտ ախճիգյը վրխելան մրնացալ ար կոչ եկած տրոնեն քըմակին կաղնած։

Էտ մարթիքյը, վեր էտ ըխճրկանը գյանքը ազադին դարվիշին անա, վեր դարվիշը կյա վեչ ըտրա կըլոխը կըտրի, ուրան էլ փըռչըվարա անի, թա խե՞ յա տոռնը պրեցալ, պրերըմ ըն մին յաշիգյ շինում, էտ ըխճրկանը մրեչին տինում, նհետն էլ օտելի պեներ տինում, քրցում ըտրղան մոտի կյետը։

Դարվիշը ըրոտալավ, կյըռկյոռալով կյամ ա ուրան ամարաթը, տրեսնրմ լոխ վրեղին հավասար ըն ըրալ, քանդալ։ Մրնըմ ա մաթ մրնացած։

Ըչըղվելան սաղ չանը տրղտողըմ ա։

Դարվիշը դաստի գյուղում ա, վեր էտ էն ըխճրկանը պրենն ա, վեր ախճիգյն ա էտ վերչի օթախին տոռնը պրեց ըրալ։ Նա օղըմ ա ըշտրեղ էլ ինի էտ ըխճրկանը ճարի, կըտոր-կըտոր անի։

Յոր ա օնըմ տրժոխկին կավաղանը, երգյիր-երգյիր շոռ կյամ, վեր էտ ըխճրկանը քյըթնի։

Մրհեդ դարվիշին թողինք էտ ըխճրկանը հետան շոռ կյալիս, մունք քյինինքյ տրեսնանք էն յաշիգյը վեր ըխճրկանը մրեչին ըն տրրալ, ըշտրե՞ղ քյինից, հի՞նչ տրեռավ։

Մին տրեղ մին թաքավեր ա ինում, ըտրան ինում ա մին մադար տրղա, քրսանէրկու տրրեկան։ Ծրնողնին հիշքան օղըմ ըն էտ տրղին փրսակին, տրղան ռազի չի կրենում։

Մին օր էլ, հիրը ինքը տանը մինակ ար, տուս ա կյամ ուրանց պալատին կյետին զուլի բալկոնը, կյետին մրեչը ընգած արևին շոխկին եշրմ։ Էտ վախտը տրեսնում ա վեր կյետը մին յաշիգյ պրերավ, էտ յաշիգյըն էլ մին քարի թուշ իլավ, կաղնից։

Թաքավերին տրղան ուրան ծառան ղարկըմ ա, վեր քյինի էտ յաշիգյը պրերի։ Ծառան քյինում ա, պրերում, թաքավերին տրղան հալա յաշիգյը պեց չանում, տրնում ա ուրան օթախըմը, իտի էլ թողում։ Ծառան վեր կյերակուրնի յա պրերում թաքավերին տրղին

հետի, էտ ախճիգը յաշիգյան տուն ա կյամ, կրեսն օտրմ։ Իտի էլ միշտ օտրմ ա, կրես թողրմ։ Մին հրետ էլ ծառան դուլուղ ա ջիհում, թաքավերին տրղին ասրմ։ Թաքավերին տրղան բուսը պահրմ ա։ Առաչ ինքը կյերակուրին կրեսը օտում ա, կրեսը թողում, ետնան քյընում ա հուրթան եշում, տրեսնրմ էտ յաշիգյան մին ախճիգ տուն եկավ, կյերակուրին մընացածը կերավ, լմա օղրմ ար, թա նի մրննի յաշիգին մաչը, թաքավերին տրղին պատկերը հիլումը տրեսնում ա, վեր հուրթան ուրան ա եշում։ Ախճիգը ինքն ուրան ասրմ ա. «էս հի՞նչ կյեղեցիկ տրղա յա, դե հի՞նչ արած, վեր իմը չի»։ էտ ախճիգն էլ ա շատ կյեղեցիկ ինում, վեր արևին ասրմ ա. «Ցու կաց, յրես քու տրեղ լուս տամ»։

Տրղան ըտեղան քըշանրմ ա, կյամ էտ ըխճրկանը խրտտրմ, ասրմ. — Վրերչը խրտետրս ընգյիր, քյրեզ մրհար էս ա հինգ տարի յա, մրտածրմ ը՞մ։

էտ մասին նա ուրան ծրնողներին ասրմ ա. ծրնողնեն համոզ ըն կրենում, ըտրանց փրսակում ըն։

Օխտը օր, օխտը քըշեր հրրսանիք ըն անրմ։ Օթինչի օրը դարվիշը կավազանը ծեռքին հրսնում ա էտ քաղաքը։ Մին օր էլ, վեր էտ ախճիգը ուրանց պալատին փալաքյաններավը պրցրանում ար, դարվիշը տրեսնում ա էտ ըխճրկանը։ Նա ուրան կավազանավը տափին թըխում ա, լոխ քարանրմ ըն, էտ ըխճրկանան կրման։

Դարվիշը մին մրեծ կրակ ա անրմ, մին ճիրավ լրցած ղազան տրնում կրակին, վեր ըխճրկանը կրտոր-կրտոր անի, իփի։ Հենց վեր էտ վախտը մուտանրմ ա, էտ պալատին կոխկի կյետին զուլան մին կյեռթնուկ ա կյամ, տուն կյամ, էտ ըխճրկանը ասրմ. — Ա՛յ նախշուն ախճիգ, քու օթախրմրտ իտի մինակ նըստած լաց մի ինիլ, տրես քյրեզ հի՞նչ ըմ ասրմ։ Կյետին ծրեր զուլի ղրաղի քուլերրմը էնա մին ծու կա, քյինի եր կալ, էրկու ծրեռքավ հոփ տու, կոտրի։ Դարվիշին օժը էնա էտ ծուվին մեչին, վեր կոտրիս, դարվիշը թուլանալու յա, եր ընգնի։ էն վախտը էլհա սաղ աշխարքրս եր ա կենալու քարացած տրեղան, մարթիքյը զըրթնելու յըն, էլհա կանանչը փրսնելու յա, սաղ աշխարքրս կենթանանալու յա։

Ախճիգը իտի էլ անրմ ա։ Դարվիշին ասրմ ա. — Դե տու ինձ օտիլը ուտելու վրս, թող քյինիմ տուն, էլհա կյամ։

Դարվիշը էտ վախտը տրենակնին սրրում ար։ Նա թողրմ ա։ Ախճիգը քըշանում ա, քյինում էն քուլերրմը ման կյամ, ծուն ճարրմ, էրկու ծրեռքավ հոփ տամ, կոտրրմ։ Դարվիշը թուլանրմ ա, եր ընգնում, սատկրմ։

Էլհա աշխարքըս զուրթնանըմ ա, մարթիքյ քար տըեղան եր ըն կրենրմ, ծառերը կընանչըմ ըն, վարթերը պըեցվում՝ թըռչուններն՝ երքրմ։ Ամման տըեղ լուս, օրախոթուն, լիքը աշխարք, արև, կյարունք, ջահիլոթուն...

Մինակ էս հաքյաթը ասողը, մին էլ կլրողը չի ինը՞մ...

Թաքավերը թազադան օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ, էտ քաղաքին սաղ ժողովուրթը ղոնաղ կանչըմ։ Ամման տըեղ զուռնա, տրմրրլա, պար նան երք։ Մինչև օրըս էլ էտ ախմիգյը հալա ապրըմ ա բախտավեր, ուրան սիրած տըղին նհետ, վեր ամման մարթի բախտ չի, վեր իտի ինի՞... Դե դարդերըս շատ ա, թող լըհա տուս անիմ, մըհենդյ էլ մին օրիշը թող հաքյաթ ասի[1]...

---

[1] Վերջին նախադասությունը ասացողի հավելումն է (Ծ. Կ.)։